Արձանագրություն N 3

ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-23/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի

գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 25 նոյեմբերի 2022թ

ժամը 10:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը

անդամներ՝ Ալիսա Հայրապետյանը, Հռիփսիմե Աջամօղլյանը

քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված կարգով և ժամկետում «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊ ընկերությունը հանձնաժողովին է ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակները և գնահատող հանձնաժողովին ուղղված գրություն, առ այն, որ ընկերությունը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտե ուղարկած՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարությունը:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովին ուղղված գրությունը, ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարությունը և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմամբ, այն է՝ բեռների, փոստի և (կամ) ուղևորների՝ ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայության մատուցման գործարքը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում, եթե այն սկսվում և ավարտվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ինչպես նաև Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով, որ համակարգում ավտոմատ արտացոլված չէ այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը, քննարկման արդյունքում որոշեց,

ա) «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊ ընկերության ներկայացրած հայտը գնահատել անբավարար,

բ) մերժել ընկերության կողմից ներկայացրած հայտը՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ մասով սահմանված պահանջի համաձայն, հետևյալ հիմնավորմամբ՝ գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի 5.2 կետով սահմանված պահանջներին և ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ԱԱՀ-ի դրույքաչափին,

գ) գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ,

դ) հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ մասի իրավակարգավորմամբ ընկերության կողմից ներկայացված հայտը մերժելու փաստը և հաշվի առնելով

այն հանգամանքը, որ առկա չեն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավական հիմքը՝ հետևապես չդիմել Ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընկերությանը ներառելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ս. Մաթևոսյան

անդամներ՝ _____ Ա. Հայրապետյան

_____ Հ. Աջամօղլյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան